ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 6 *Общественные науки*

Ա. Մնացականյան

ԿՈՄՍ ՇՈՒԼԵՆԲՈՒՐԳ ՖՈՆ-ԲԵՐԳԻ՝ ԿՈՎԿԱՍԻ ԱՐԽԻՎԸ

I

Պատմական-գիտական դրականության մեջ շատ են քննարկվել գերմանական իմպերիալիզմի կողմից 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին դեպի արևելյան երկրները կատարվող նվաճողական քաղաքականության հարցերը, բացահայտվել են վիլհելմյան Գերմանիայի նվաճողական ծրագրերը և նրանց իրականացման համար ծավալված պայքարը։ Կարելի է հիշատակել ակադեմիկոս Ե. Վ. Տարլեի „Европа в эпоху империализма" նշանավոր աշխատությունը, Պոլետիկայի „Возникновение мировой войны" ստվար գիրքը, որոնց մեջ բազմակողմանիորեն քննարկվում են գերմանական, անգլիական, ֆրանսիական աղբյուրները և դրանց նյութերի հիման վրա գնահատվում են Արևելքում առաջին իմպերիալիստական պատերազմի պատճառները, գերմանական կայսրության գործակալների մոլեգին գործունեությունը պատերազմի նախապատրաստության գծով։ Առաջին համաշխարհային պատերազմին նվիրված այդ երկու խոշորագույն և արժեքավոր աշխատությունները, որոնք հրատարակվել են մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը և որոնք որոշ իմաստով ամփոփում են այդ հարցի շուրջը եղած դրականության ու աղբյուրների քննարկումը, ոչ մի խոսք չեն ասում գերմանական իմպերիալիզմի կողմից Կովկասը գավթելու ուղղությամբ եղած ծրագրերի մասին, չեն լուսաբանում գերմանական կայսրության գլխավոր շտաբի գործակալ կոմս Շուլենբուրգ ֆոն-Բերգի գործունեությունը Կովկասում։

Շուլենբուրգի ծավալուն, բազմակողմանի գործունեությունն անտեսված է նաև Ա. Սեյդամետովի և Ն. Շլյապնիկովի „Германо-австрийская разведка в царской России"[1] *գրքում, որը հատկապես քննարկում և լուսաբանում է գերմանական ու ավստրիական գործակալների լրտեսական-դիվերսիոն կազմակերպությունների գործունեությունը ցարական Ռուսաստանում՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։*

Այդ հարցը չի լուսաբանվել նաև այն սակավաթիվ աշխատությունների մեջ, որոնք հրապարակ եկան երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Այսպես, օրինակ, 1942 թ. լույս տեսավ Գ. Կոզլովի „Разбойничий германский империализм" *աշխատությունը,*[2] *որի մեջ արված են գերմանական իմպերիալիզմի ավազակային գաղութային ծրագրերը Ռուսաստանի նկատմամբ, սակայն Կովկասի մասին եղած փաստերը չեն մեկնաբանվում։*

---

[1] Воениздат, Москва, 1938 г.

[2] „Под знаменем марксизма", 1942 г., № 8—9.

1944 թ. կենտրոնական մամուլում և ապա առանձին հրատարակությամբ լույս տեսավ ակադեմիկոս Դերժավինի „Дранг нах Остен" գրքույկը,[1] որը համառոտ կերպով շարադրում և լուսաբանում է գերմանական իմպերիալիզմի պլանները՝ Արևելքում «կենսական տարածություններ» նվաճելու մասին։ Հեղինակը հարևանցիորեն հիշատակում է նաև Կովկասի նկատմամբ գերմանական զավթիչների ունեցած վաղեմի ախորժակների մասին։ Սակայն գրքում չի խոսվում այն մասին, թե գերմանական գլխավոր շտաբի ներկայացուցիչներն ինչպիսի ջանքեր են գործադրել հոհենցոլերների և կրուպպների ցանկությունները կատարելու, Կովկասը նրանց գաղութը դարձնելու համար։

Վերջերս լույս տեսավ Զ. Էգգերտի „Захватнические планы Германии в годы первой мировой войны"[2] խորագրով հոդվածը, ուր հեղինակը տալով գերմանական մոլի ռազմավարներ Լյուգենդորֆի, Տիրպիցի սեփական վկայությունների և պանգերմանական միության նշանավոր մեմորանդումի ու այլ փաստաթղթերի տեսությունը, բացահայտում է գերմանական իմպերիալիզմի ընդարձակ նվաճողական պլանները, նրանց կիրառման նախապատրաստումը տարբեր երկրներում։ Բայց այստեղ ևս չենք գտնում որևէ հիշատակություն Կովկասում գերմանական կայսրության գործակալների տենդագին ռազմա-քաղաքական գործունեության մասին, որով նախապատրաստվում էր պանգերմանական միության առաջ քաշած ծրագրերի կենսագործումը Կովկասում և Մերձավոր Արևելքում։

Մինչդեռ գերմանական իմպերիալիզմն առաջին համաշխարհային պատերազմից դեռ շատ առաջ նախապատրաստում էր Կովկասի զավթումն ու դաղութացումը, կովկասյան ստրատեգիական կամուրջի օգտագործումը՝ դեպի Ռուսաստան և Մերձավոր Արևելք էքսպանսիա ծավալելու համար։ Կովկասի գրավման խնդիրը գերմանական իմպերիալիզմի համաշխարհային նվաճողական պլանի շղթայի ամենակարևոր օղակներից մեկն էր։

Գերմանական իմպերիալիզմի այդ ծրագրի կատարման համար պատերազմի նախօրյակին Կովկասյան երկրամասում ստեղծվեցին հետախուզական-լրտեսական կազմակերպությունների խոշոր կենտրոններ, որոնք գործում էին կայսերական գլխավոր շտաբի և Արտաքին Գործերի Մինիստրության առաջադրանքով։ Այդպիսի խոշոր կենտրոններից մեկը գտնվում էր Հայաստանում, գերմանական գլխավոր շտաբի սպա Էդգար Անդերսի գլխավորությամբ. նրա գործունեությունը վեր հանելը մի առանձին աշխատանք է։ Մյուս խոշոր կենտրոնը գործում էր Թբիլիսիում, կոմս Սուլենբուրգ ֆոն-Բերգի գլխավորությամբ, որի մասին կխոսվի ստորև, նյութ ունենալով Սուլենբուրգի՝ Կովկասի արխիվի և նրա գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթերը։

2

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Շլիֆֆենի և Մոլտկե Կրտսերի կողմից մշակվել էին գերմանական իմպերիալիզմի նվաճողական ստրատեգիական պլանները, որոնց կենսագործման նպատակով

[1] Державин, „Дранг нах Остен". Тбилиси, 1944 г.
[2] „Вопросы истории", № 11—12, 1946 г., стр. 49—71.

տարբեր երկրների համար լրացուցիչ կերպով կազմվում էին նաև առանձին ծրագրեր։

Դեռևս 1912 թ. նոյեմբերի 28-ին գերմանական գլխավոր շտաբի ներկայացուցիչ գեներալ Ֆոն-դեր-Հոլցը և Թյուրքական գլխավոր շտաբը մշակեցին օսմանյան բանակի՝ Կովկաս ներխուժելու և այն գավթելու ծրագիրը։ Ծրագիրը կազմվել էր Թյուրքերեն ու գերմաներեն լեզուներով և կոչվում էր «Ռուսաստանի դեմ գրոհի պլան»։ Պլանի ներածական մասում ասված էր.

«Օսմանյան զորքերը Կարսի ամրոցի դեմ չեն ուղարկվի, քանի որ Կարսն ամրացված է և նրա վրա գրոհելը կլինի ուղղակի ժամանակի և միջոցների վատնում»։

Գրոհը դեպի Կովկաս նախատեսվում էր կազմակերպել հետևյալ պլանով.

«... 11-րդ և 12-րդ բանակային կորպուսները, որոնք գտնվում են Պարսկաստանի սահմանում, Մակուի վրայով կգնան դեպի Աղձնիկ քաղաքը, թևանցելով Արարատ սարը, կհարձակվեն Շահթախթիի վրա, հեշտությամբ կմտնեն Նախիջևան, զարգացնելով հարձակումը, կգրավեն Երևանը, Անգրկովկասը, Կովկասը։ Այդ երկու բանակային կորպուսներից հետո կշարժվեն 9-րդ և 10-րդ բանակային կորպուսներն իրենց պահեստային զորքերով, իսկ հարկ եղած դեպքում 8-րդ բանակային կորպուսը կշարժվի նրանց հետևից։ Այդ բոլորից հետո մեր ոնք գերակշռություն կունենան ռուսական ուժերի նկատմամբ, քանի որ այդ զինվորները, որոնցից կազմված է ռուսական կովկասյան բանակը, հյուսիսից են, չեն կարող դիմանալ Կովկասի շոգին և մալարիայի ու այլ հիվանդությունների պատճառով երկար չեն կարող դիմադրել։ Մյուս կողմից էլ Կովկասի մուսուլմանների, վրացիների, հայերի ապստամբություններն իրենց կողմը կգրավեն մեծ թվով ռուս զինվորներ։ Վերջապես... Գերմանիայի և Ավստրիայի միջամտությունը կխորտակի ռուսական բանակը և պետությունը...»[1]

Այդ պլանը, իհարկե, վերջնական չէր։ Հետագայում, երբ գեներալ Ֆոն-դեր-Հոլցին փոխարինելու եկավ Լիման-ֆոն-Սանդերսը, վերջինս Թյուրքիայի ռազմական գործերի մինիստր Էնվեր-փաշայի հետ միասին մշակեցին Կովկաս ներխուժելու և այն գավթելու ռազմա-ստրատեգիական պլանի նոր վարիանտներ։ Այդ ծրագրի կենսագործումը նախապատրաստելու և Կովկասում գերմանական իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը կիրառելու նպատակով էլ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ստեղծվեց և լայն գործունեություն ծավալեց Շուլենբուրգի գլխավորած կենտրոնը Թբիլիսիում։

3

Թբիլիսիի գերմանական գլխավոր հյուպատոս Ֆեյդելը 1912 թվի սկզբներին ետ կանչվեց և նրան փոխարինեց կոմս Շուլենբուրգը։

Վերջինս նախորդից տարբերվում էր նրանով, որ գերմանական իմպերիալիզմի գավթողական քաղաքականությունը կիրառելու մեջ ավելի

[1] Կովկասյան Օկրուգի Շտաբի Ռազմա-պատմ. Արխիվ, ֆոնդ 85, գ. 107, թ. 90—91։

հաժարձակ էր և լրտեսական-դիվերսիոն աշխատանքի ավելի մեծ փորձ ուներ։ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունը և գերմանական գլխավոր շտաբը Շուլենբուրգին ուղարկելով Կովկաս, մեծ հույսեր էին գրել նրա վրա։ Նրան առաջադրանք էին տվել Կովկասի քաղաքներում ու շրջաններում կազմակերպել գործակալների լայն ցանց, ծավալել հետախուզական-քայքայիչ աշխատանքներ և նախապատրաստել գերմանական ու թյուրքական գլխավոր շտաբների՝ Կովկասի գավթման ռազմա-ստրատեգիական պլանների կատարումը։

Գալով Թբիլիսի, կոմս Շուլենբուրգն անմիջապես գործի անցավ։ Կովկասյան ոստիկանական հատուկ կորպուսի պետ ոստիստր Բելիկը Կովկասյան բանակի շտաբին հասցեագրած № 104 ռապորտով 1913 թվականի փետրվարի 7-ին հաղորդում է հետևյալը.

«1912 թվից Թիֆլիսում գերմանական հյուպատոս կոմս Շուլենբուրգը գտնվում է հսկողության տակ։ Հենց սկզբից նկատվել է, որ նա մոտիկ կապեր է հաստատել ավստրիական և թյուրքական հյուպատոսների հետ, ինչպես և հատկապես Կարսի թյուրքական հյուպատոսության քարտուղար Հասան բեկի հետ, որն ապրում էր Թիֆլիսում։ Հիշված անձնավորությունները կազմում են սերտորեն միավորված մի խմբակ, որն ամեն կերպ հեռու է մնում ուրիշ հյուպատոսներից»։[1]

Ավստրիական հյուպատոս Ուրբասը, թյուրքական հյուպատոս Ռեմզի բեկը (որին շուտով փոխարինեց Մունիր Սուրիա բեկը) և Կարսի հյուպատոսության քարտուղար Հասան բեկը Շուլենբուրգի առաջին զինակիցներն էին Թբիլիսիում։ Նրա պահանջով շուտով փոխվեց շվեյցարական հյուպատոսը, վերջինիս փոխարեն նշանակվեց գերմանական հյուպատոսության նախկին խորհրդական կոմս Դրայխենֆելսը, որը գերմանական շտաբի գործակալներից էր և չեզոք երկրի ներկայացուցիչ դառնալով, քողարկված շարունակում էր կատարել ստացած առաջադրանքները։

Շուլենբուրգը մի շարք արտակարգ միջոցներ ձեռք առավ հյուպատոսության ապարատը հետախուզական կենտրոն դարձնելու ուղղությամբ։ Նա հյուպատոսությունից հեռացրեց ռուսահպատակ քարտուղարին և նրա փոխարեն Գերմանիայից կանչեց Եվգենիե Լորցին, որը ստանձնելով քարտուղարի պաշտոնը, երբեք այդ գործով չէր զբաղվում, այլ կատարում էր միայն հետախուզական առաջադրանքներ։ Շուլենբուրգի գործակից Հասան բեկը մի գաղտնի զրույցի ժամանակ Շուլենբուրգի գործի անցնելու մասին պատմել է հետևյալը.

«Շուլենբուրգը հավաքեց բոլոր ծառայողներին և զգուշացրեց, որ եթե մեկն ու մեկը հյուպատոսության գործունեության մասին որևէ բան է հաղորդել, կենթարկվի մահապատժի»։

Շուլենբուրգը եռանդուն աշխատանք էր ծավալում Կովկասում եղած գերմանացիներին համախմբելու ուղղությամբ։ Կովկասյան օկրուգի շտաբին ուղղված մի գաղտնի զեկուցագրում Կովկասյան ոստիկանական հատուկ կորպուսի վարչությունը գրում է.

«Գործակալների միջոցով ստացված տեղեկությունների համա-

[1] Վրաց. ՍՍՌ Հոկ. Ռևոլ. Կենտր. Արխիվ, ֆ. 3, գ. 157, թ. 181։
[2] Նույն տեղում, թ. 181—182։

ձայն, Թիֆլիսի գերմանական գլխավոր հյուպատոս Շուլենբուրգ ֆոն-Բերգը հյուպատոսների և հյուպատոսական գործակալների միջոցով տեղեկացրել է Կովկասում ապրող գերմանահպատակ պահեստի սպաներին և ստորին աստիճանավորներին, որ նրանք պատրաստ լինեն անմիջապես մեկնելու արտասահման, երբ կկանչվեն դրոշի տակ։[1]

Շուլենբուրգի հաջորդ քայլը եղավ անձամբ ծանոթանալ Կովկասյան երկրամասին։ Իրեն հայտարարելով որսորդության սիրահար, Շուլենբուրգը, որսորդական հրացանով զինված, Կովկասյան երկրամասին լավ ծանոթ ուղեկիցների հետ միասին, որսորդական շները հետևից գցած, շրջում էր Կովկասի տերիտորիան։ Կառավարական օրգաններից թույլտվություն ստանալով, նա որսի էր գնում Սև ծովի ափերը, Բաքուի շրջանը, լեռնանցքները, կովկասյան երկաթուղին, թյուրքական սահմանամերձ շրջանները, Լոռվա ձորերը։ Ժանդարմական մի գաղտնի գրության մեջ հիշատակված է.

«Շուլենբուրգը շրջադայում է Կովկասյան երկրամասը ծայրից-ծայր, բոլոր անկյունները, լեռները, ձորերը, կածանները»։[2]

Հյուպատոսությունը դարձնելով գերմանական գործակալության ղեկավար և կազմակերպիչ կենտրոն, Շուլենբուրգն իր գործունեությունն իրականացնում էր Թիֆլիսում և գավառներում ստեղծված լայն ցանցի միջոցով։ Այդ մասին հարուստ նյութեր են պարունակում Շուլենբուրգի արխիվի գործերը։

Շուլենբուրգի նախաձեռնությամբ Կովկասում կազմակերպվեց «Ավստրո-գերմանական լեռնային միացյալ ակումբ», որն ուներ մի քանի ճյուղեր։ Այդ ակումբը նույնիսկ դիմել էր Կովկասյան իշխանություններին, պահանջելով իրեն տրամադրել հողեր, որպեսզի ստեղծվի տնտեսություն, գերմանացիներ հավաքվեն այդ տնտեսության շուրջը և գյուղատնտեսություն վարելու «առաջավոր օրինակ ցույց տան»։ Կովկասյան զինվորական օկրուգի շտաբն այդ առթիվ դիմել է Պետրոգրադ, ռուսական բանակի Գլխավոր Շտաբին.

«... Նկատի ունենալով, որ գերմանացիների գործունեությունը Կովկասում և նրա սահմանակից Թյուրքական ու պարսկական շրջաններում... մեծ մասամբ քողարկվելով տնտեսական խնդիրների անվան տակ, հետապնդում են բացառապես քաղաքական նպատակներ, իսկ երբեմն էլ օգտվում են դրանից միայն ռազմական հետախուզություն կատարելու համար, ցանկալի կլիներ թույլ չտալ հյուպատոսներին Կովկասում ակումբներ կազմակերպելու»։[3]

Կովկասյան օկրուգի շտաբի դիմումներն իզուր անցան։ Գերմանական ակումբը հիմնվեց և Շուլենբուրգի առաջադրանքներով լայն գործունեություն ծավալեց։ Ակումբը Գերմանիայից հրավիրում էր զանազան էքսկուրսանտներ և դիտական աշխատողներ, որոնք, այցելելով Կովկասյան երկրամասը, ռազմական հետախուզական աշխատանքներ էին կատարում։

Շուլենբուրգի արխիվի փաստաթղթերը ցույց են տալիս այն մե-

---

1 Կովկ. Օկր. Շտաբի Ռազմա-պատմ. Արխիվ, ֆ. 85, գ. 108, թ. 9։
2 Նույն տեղում, գ. 158, թ. 274։
3 Նույն տեղում, գ. 19, թ. 88—90։

ծածավալ տնտեսական և քաղաքական-պրոպագանդիստական աշխատանքը, որ Կովկասում կատարում էին գերմանական գլխավոր շտաբի գործակալները 1910—1914 թ. թ.։ Գերմանական գաղութներն Անդրկովկասում հանդիսանում էին Շուլենբուրգի աշխատանքի հենակետերը։ Բացի գաղութներից, գերմանական շտաբային սպա-ինժեներ Շմիդելը և նրա էքսպեդիցիայի մեջ մտնող հետախույզների մի մեծ խումբ, նավթի հանքեր որոնելու պատրվակով. 1912—1913 թվականներին վարձակալել էին Օգուրգեթի շրջանի ծովափնյա հողերը և հետախուզելով կովկասյան ամբողջ ծովափը, կետեր էին նախապատրաստում դեսանտ իջեցնելու համար։

Գերմանական շտաբային սպա Ֆրիդրիխ Ցիմմերը 1913 թ. հունվարից մինչև 1914 թ. ամառը գործում էր Ալավերդու պղնձահանքերում և Լոռու գյուղերում որպես «հին զենքերի կոլեկցիաներ հավաքող», սակայն իրականում նախապատրաստում էր մի շարք դիվերսիոն ակտերի կատարումը ռուսական բանակի թիկունքում։[1] Նույն կարգի առաջադրանքներով էին աշխատում Բաքվում խոշոր ֆիրմաներ ունեցող գերմանացիներ Հենրիխ Ռուստը, Էդվարդ Ռեպմանը, միլիոնատեր կապիտալիստ Տիլմանը, Գերման Մեյը և շատ ուրիշներ։ Գերմանացի այդ կապիտալիստները շահագործելով Կովկասի տնտեսական ռեսուրսները և աշխատավորներին, իրենց քամած շահույթի մի զգալի մասը տրամադրում էին գերմանական գործակալության ղեկավար Շուլենբուրգին՝ հետախուզական նպատակներով ծախսելու համար։ Շուլենբուրգը Կովկասում գերմանական քաղաքական պրոպագանդան ծավալում էր երեք օղակների՝ լութերական եկեղեցու, „Kaukasische Post" թերթի և գերմանական դպրոցների միջոցով։ Գերմանական եկեղեցու և „Kaukasische Post" թերթի գլուխն էր կանգնած Շուլենբուրգի գինակից պաստոր Իոհան Շլեյնինգը։ Նա գլխավորում էր լութերական սինոդի նիստերը, պրոպագանդիստներ էր ուղարկում գաղութները։ Թբիլիսիում հրատարակվող „Kaukasische Post" թերթը հրատարակվում էր մինչև 1914 թ. օգոստոսը։ Այդ թերթի յուրաքանչյուր համարը մի պանգերմանական-ռասայական պրոկլամացիա էր, ուղղված Կովկասի ժողովուրդների և ռուսների դեմ, ի պաշտպանություն գերմանական ագրեսիվ քաղաքականության։ Այդ թերթի մի համարում Շլեյնինգը դիմում է Կովկաս ներգաղթած գերմանացիներին.

«Առաջին՝ խոսիր միայն գերմաներեն, երկրորդ՝ երգիր միայն գերմաներեն, երրորդ՝ գործիր գերմանական ձեռվ, չորրորդ՝ աղոթիր գերմանական եղանակով»։[2]

Շուլենբուրգի արխիվի նյութերից երևում է գերմանական գործակալների տենդագին աշխատանքը թերթի միջոցով, գերմանական եկեղեցում և դպրոցներում։ Քաղաքական պրոպագանդայի այդ միջոցներն օգտագործելով, Շուլենբուրգը Կովկասում նախապատրաստում էր գերմանական ռեգերվային բանդաներ, որոնք պետք է հեշտացնեին գերմանա-թյուրքական ներխուժումը Կովկաս և նրա գավթումը։

Գերմանական գործակալների լրտեսական աշխատանքի կարևորագույն

[1] Վրաց. ՍՍՌ կենտր. Պատմ. Արխիվ, ֆ. 3, գ. 724, թ. 384 և 422.
[2] „Kaukasische Post", 1913 թ., № 34.
[3] Վրաց. ՍՍՌ Լոկալեժթ. Ռեոլ. կենտր. Արխիվ. ֆ. 3, գ. 134, թ. 943.

վայրերից մեկը Թրիլիսիում հանդիսանում էր «Լոնդոն» հյուրանոցը Մադատովսկայա փողոցի վրա։ Այդ հյուրանոցը պահում էր Էմիլ Ռիխտերը։ Հյուրանոցն ընդունում էր բացառապես արտասահմանից եկած և Կովկասում ապրող գերմանացի հաճախորդներին։ Հյուրանոցն իր ճոխությամբ և շքեղությամբ, եվրոպական կենցաղի բոլոր կանոններով ու սովորություններով՝ գերազանց էր։ Նրա պահպանման համար ծախսվում էին հսկայական միջոցներ, որոնց մի չնչին՝ մասն էր ծածկվում ստացված եկամուտից։ Հետագայում պարզվեց, որ «Լոնդոն» հյուրանոցը պահվում էր Շուլենբուրգի բաց թողած վարկերով։ Գերմանացիները հյուրանոցն անվանում էին «Տեսակցության տուն»։ Էմիլ Ռիխտերը և նրա կինը՝ Եկատերինե Ռիխտերը Շուլենբուրգի ակտիվ գործակալներից էին։ «Այդ հյուրանոցը,—կարդում ենք Կովկասի փոխարքային ոստիկանական կորպուսի դրած գաղտնի մի գեկուցագրի մեջ,—հանդիսանում է այն բոլոր գերմանացիների գաղտնի բնակարանը, որոնք Թիֆլիս են գալիս ռազմական լրտեսության համար։[1] Չնայած ցարական իշխանության օրգաններին հայտնի էր այդ ամենը, այնուամենայնիվ, «Տեսակցության տունը» գործում էր գիշեր ու ցերեկ։ Այնտեղ հաճախ այցելում էր ինքը՝ կոմս Շուլենբուրգը, նրա քարտուղար Եվգենիե Լորցը, այստեղ էր իջնում և շաբաթներով ապրում Էրզրումի գերմանական հյուպատոս Էդգար Անդերսը։ Ռիխտերը և նրա կինը հիմնականում գործում էին որպես գերմանական հետախույզներին իրար ներկայացնողներ, կապեր ստեղծողներ, զանազան հանձնարարություններ մեկից մյուսին փոխանցողներ ու հաղորդողներ, սակայն երբեմն նրանք կատարում էին նաև ուրիշ առաջադրանքներ։ 1913 թվին Ռիխտերի՝ Գերմանիայից ստացված մի նամակի մեջ կարդում ենք.

«... Հույս ունենք, որ մոտադա ժամանակներում հորիզոնում կերևան հետաքրքրական լատկերներ,—գրում է նամակի հեղինակ Կուրտ Կրիգերը։ ... Ես Ձեզ պետք է տամ մի հանձնարարություն Կասպիական երկրամասում մի ճանապարհորդության մասին, հետախուզական մի առաջադրանք կատարելու համար։ Խնդրում եմ Ձեզ համաձայնություն տաք դրանում։»

Ռիխտերը հաճույքով կատարեց Կրիգերի հանձնարարությունը։ Նա իր հավաքած բոլոր ռազմական տեղեկությունները հաղորդում էր Շուլենբուրգին և ուղարկում Բեռլին՝ Կրիգերին։ 1914 թ. հունվարի 12-ին Կրիգերն իր նամակներից մեկում Ռիխտերին հայտնում է.

«... Նամակներդ ստացվում են հաջող, հիանալի է... Թիֆլիսից ուղարկած Ձեր տեղեկություններն ուրախացնում են մեզ։ Ձեզ կուղարկեմ մեկ ոսկե գրչակոթ և երեք ոսկե ծայր։ Ողջույններ։

Կուրտ Կրիգեր։ Բեռլին Ներբուրգ-Շտրասսե։»[3]

Ռիխտերի «Տեսակցության տունը» մինչև պատերազմի առաջին ամիսները գոյություն ուներ և կատարում էր գերմանական հետախուզության առաջադրանքները։ Օգոստոսին Ռիխտերը, որպես գերմանական բանակի պահեստի աստիճանավոր, դերի վերցվեց և աքսորվեց։ Այրի մնացած եկա-

[1] Նույն տեղում, նույն ֆ. և գ.։
[2] Նույն տեղում, թ. 143։
[3] Նույն գործում, թ. 99։

տերինե Ռիխտերը որոշ ժամանակ շարունակում էր պահպանել հյուրանոցը։ Օգոստոսին Եկատերինեն մեկնեց Մոսկվա։ Նա իր հետ տանում էր Թբիլիսիի գերմանական հյուպատոսության քարտուղար Լորցի գրությունը՝ հասցեագրված Մոսկվայում գերմանական հյուպատոսի քարտուղար Պախին։ Այդ գրությամբ Լորցը թախանձագին խնդրում էր Պախին. «Ամեն տեսակի օգնություն ցույց տալ Թիֆլիսում «Լոնդոն» հյուրանոցի տեր գերմանացի այրի Եկատերինե Ռիխտերին, որը Կովկասում մեծ գործ է կատարում Գերմանիայի օգտին»։[1] Լրտեսուհին Մոսկվայում ձեռք բերեց այն ամենը, ինչ հարկավոր էր, և վերադարձավ Թիֆլիս, շարունակեց ղեկավարել «Տեսակցության տունը» մինչև 1914 թվի վերջը։ Միայն Կովկասյան ճակատում ռազմական գործողություններ ծավալվելուց հետո «Տեսակցության տունը» վերացվեց, իսկ Եկատերինե Ռիխտերը մեկնեց Շվեդիա։

Շուլենբուրգի գործակալների մի կազմակերպություն էլ ստեղծվեց Կովկասյան Թանգարանում։ Նրա մեջ մտնում էին Թանգարանի դիրեկտորի օգնական Ռիխարդ Գերմանովիչ Շմիդտը, Թանգարանի աշխատակիցներ Եվգենի Պֆեցենմայերը, Ֆրից Գլազերը, Կարլ Կրելը, Խրիստոֆոր Շրեգերը, Ազոլֆ, Լիդա և Լիլի Կայզերները, կոմսուհի և կոմս Դրայխենֆելսները, կոմս Ալեքսանդր և կոմսուհի Կուչենբախները և ուրիշներ։ Այդ կազմակերպությունը, խիստ կոնսպիրացված լինելու շնորհիվ, գործում էր մինչև 1916 թվի կեսերը։ Թանգարանի լրտեսական կազմակերպությունը, մանավանդ պատերազմի տարիներին, փաստորեն ղեկավարություն և ուղղություն էր ցույց տալիս Կովկասում գործող գերմանական գործակալներին։ Կազմակերպությունը գործում էր կոմս Շուլենբուրգի և Էդգար Անդերսի ղեկավարությամբ։

Ռիխարդ Շմիդտը նամակագրություն ուներ Էրզրումի և Պետրոգրադի դեսպանների հետ։ Նա 1913 թվից աշխատում էր որպես նաև «Պրովոգնիկների ընկերություն» առևտրական ֆիրմայի անդամ. որպես Թանգարանի աշխատող և առևտրական, նա շրջում էր երկրամասը, կատարելով հետախուզական առաջադրանքներ։ Նա գնում էր գերմանական գաղութները, Թյուրքիա, Եգիպտոս, Հարավային Հայաստան։ Շմիդտը մասնակցում էր „Kaukasische Post" և „Petersburger Zeitung" գերմանական թերթերին, իր հոդվածներում շարադրում էր գերմանական գաղութների հեռանկարները և խնդիրները։ Շմիդտը և իր օգնական Պֆեցենմայերը գերմանական գաղութներում, լութերական եկեղեցիներում, առևտրական ֆիրմաներում և բազաներում ելույթներ էին ունենում գերմանական քաղաքական կյանքի շուրջը, գաղտնի կերպով տեղեկություններ էին հավաքում ռուսական զորքի մասին և հանձնում Շուլենբուրգին։ Կովկասյան Թանգարանն էին գալիս Շլեյնինգը և մյուս պատտորները, շվեյցարական հյուպատոս կոմս Դրայխենֆելսը, «Լոնդոն» հյուրանոցի տեր Ռիխտերը, գերմանական սպաներ, դիվանագետներ և էքսկուրսիա եկած «տուրիստներ»։ Շմիդտը և Պֆեցենմայերը մտերմական կապեր ունեին փոխարքայի գրասենյակի գաղտնի բաժնի ծառայող և հատուկ հանձնարարություններ կատարող պրապորշչիկ ֆոն Սամսոն Գեմելստրեյնի հետ, որը հետագայում աշխատանքի անցավ Թբիլիսիի արսենալում։ Շմիդտի գլխավորած Թանգարանի լրտեսական կազմակերպու-

1 Նույն տեղում, գ. 726, թ. 183.

թյունը իր հավաքած բոլոր նյութերի մասին զեկուցագրերը հանձնում էր Շուլենբուրգին մինչև 1914 թ. օգոստոսը, իսկ պատերազմի տարիներին այդ կազմակերպության գաղտնի գործունեությունը գլխավորում էին Շուլենբուրգին փոխարինողները։

Գերմանական գործակալության ցանցի մի ճյուղն էլ գնում էր դեպի շվեյցարական հյուպատոսությունը։ Կոմս Դրայխենֆելսը լինելով ռուսահպատակ գերմանացի, ձևացնում էր, թե ինքը բոլորովին չի հետաքրքրվում գերմանական շահերով, բայց և այնպես նրա գործունեությունը հայտնի էր.

«Շվեյցարական հյուպատոս կոմս Դրայխենֆելսը,—գրված է ոստիկանական կորպուսի կողմից Կովկասյան օկրուգի շտաբին ուղարկված մի զեկուցագրի մեջ,—մշտական կապեր ուներ գերմանական հյուպատոս կոմս Շուլենբուրգի և նրա քարտուղար Եվգենիե Լորցի հետ, ինչպես և լրտեսներ Ռիխտերի ու Մոսլերի հետ։ Նրա մոտ հաճախ գալիս են օտարերկրացիներ, հատկապես գերմանական սպաներ։ Վերջերս նրա մոտ է եկել գերմանական գլխավոր շտաբի գնդապետ ֆոն-Պլյատոն, Դրայխենֆելսը ամենաակտիվ մասնակցություն է հանդես բերում Կովկասում գերմանացիների բոլոր ձեռնարկումներին։ Նա հանդիսանում է «Կովկասում գերմանացիների միության» նախագահը։ Հունվարին Գերմանիայից նրա մոտ եկան սպաներ Կուրտ Շլտբուխը, Գերման Մեյը, միասին գնացին Բաքու, Ելիզավետպոլ, Լենքորան, հետո վերադարձան Թիֆլիս, մեկնեցին Բաթումի...»[1]

Դրայխենֆելսը սիստեմատիկաբար այցելում էր «Լոնդոն» հյուրանոցը, Կովկասյան թանգարանը, լութերական եկեղեցին, „Kaukasische Post“ թերթի խմբագրությունը։ Նա գրեթե ամեն ամիս մեկնում էր Թավրիզ «պարսկական գորգերի» արտադրության և արտահանման գործով, հետախուզելով անդրկովկասյան երկաթուղու այդ ճյուղի վրա կատարվող ամեն մի շարժում։ Պատերազմի առաջին ամիսներին Դրայխենֆելսը ազատորեն գործում էր Թրիլիսիում։ Կովկասյան ռազմաճակատի շտաբը 1914 թվի վերջերին ցարական բանակի գլխավոր շտաբին ուղարկած մի զեկուցագրում հայտնում է.

«Թիֆլիսում շվեյցարական հյուպատոս կոմս Դրայխենֆելսը լուրջ կասկածներ է առաջ բերում դեպի ինքը, որպես գերմանական դինվորական լրտես։ Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, նա հանդիսանում է գերմանական կառավարության գաղտնի գործակալը։ Քողարկվելով... նա ճնում է ազատ... խնդրում եմ շվեյցարական կառավարության առաջ հարց դնել նրան Կովկասից հեռացնելու։»[2]

Չնայած այդ ամենին, Դրայխենֆելսը ազատ էր և շարունակում էր խոշոր լրտեսի իր գործունեությունը։

Շուլենբուրգի գլխավորած կենտրոնի մի ճյուղն էլ գտնվում էր ավստրիական հյուպատոսությունում, հյուպատոս Էմանուիլ Ուրբասի ղեկավարությամբ։ Դեռևս 1913 թ. հունիսին ժանդարմական հատուկ կորպուսի զեկուցագրում հաղորդվում է այն մասին, որ Ուրբասն ամեն օր գնում է Դիդուբե, ժամերով զբոսնում է այնպիսի մարդկանց շրջանում, որոնք ոչ մի

[1] Վրաց. ՍՍՌ կենտր. Պատմ. Արխիվ, ֆ. 8, գ. 736, թ. 16—17։
[2] Կովկ. Օկր. Շտաբի Ռազմ.-պատմ. Արխիվ, ֆ. 8, գ. 48, թ. 84։

առնչություն չունեն դիվանագիտական հիմնարկների հետ։ Ուրբասի սիրած գրասավայրերից մեկն էլ Անդրկովկասյան երկաթուղու Թբիլիսիի հանգույցն էր։ Այնտեղ նա ծանոթություններ էր հաստատել երկաթուղային զորամասերի առաջին գումարտակի հրամանատար գնդապետ Վլադիմիր Գուստավովիչ Ցունգերի հետ, հաճախում էր նրա բնակարանը, որը գտնվում էր զորանոցների տերիտորիայում։ «Ուրբասը ամեն կերպ աշխատում է Ցունգերի բնակարանը գնալ գաղտնի, որպեսզի ոչ ոք չնկատի։ Դրա համար նա հաճախ գնում է գերմանական գաղութը, զրուցում, հետո ինչ-որ մարդկանց ուղեկցությամբ մտնում է Ցունգերի տունը»[1] Ժանդարմական մի զեկուցագրում նշված է, որ «Գնդապետ Ցունգերը և հյուպատոս Ուրբասը հունիսի 3-ին կայարանում մի անհայտ կնոջ ճանապարհել են Բաթումի»[2] Այդ կինը եղել է Մարիա Վոլֆը։

Ուրբասի գործակալներից մեկը գրաֆ Ռոման Սիգիզմունդ Դրոզեսկին էր, որն ապրելով Եկատերինոդարում, կատարում էր Թբիլիսիի կենտրոնի առաջադրանքներն այդ երկրամասում։ Դրոզեսկին հաճախ գալիս էր Թբիլիսի և զեկուցում իր գործունեության մասին։ Նրա բնակարանում հայտաբերված փաստաթղթերը ցույց են տալիս, որ նա տեղագրական քարտեզներ նախագծող մասնագետ է. Նրա մոտ հայտաբերվել են Կուբանի կովկասյան ծովափերի քարտեզներ, Մայկոպի նավթի հանքերի սխեմաներ, Կովկասյան լեռնանցքների մանրամասն ուղեցույց։ Նրա բնակարանում հայտաբերվել են 65 տարբեր ձեռագրեր՝ գերմաներեն և այլ լեզուներով գրված նամակներ, ինչպես և նրա գրած գործակալական զեկուցագրերի պատճեններ, որոնք ուղարկված են Ուրբասին։

Ուրբասը ակտիվ մասնակցություն էր ունենում գերմանական և ավստրիական միացյալ ակումբի աշխատանքին, գերմանացիների գաղութային կյանքին։ Ավստրիական հյուպատոսության գործերի մեջ հայտաբերվել է մի թղթապանակ, որի մեջ գտնվում էին Ուրբասի ռազմական-լրտեսական զեկուցագրերը Շուլենբուրգին և վերջինիս հրամանագրերը հետախուզական աշխատանքը կազմակերպելու մասին։[3]

Գերմանական գործակալության Թբիլիսիի կենտրոնը, այդ գլխավոր ճյուղերից բացի, ուներ նաև անհատապես գործող լրտեսներ, որոնք ուղղակի կապված էին Շուլենբուրգի հետ և իրենց հավաքած ռազմական հետախուզական տեղեկությունները հանձնում էին նրան։ Այդպիսի նշանավոր հետախույզներից մեկն էր Մարիա Վոլֆը, որը Գերմանիայից Թբիլիսի էր եկել որպես գերմաներեն լեզվի ուսուցչուհի, սակայն աշխատում էր Շուլենբուրգի ղեկավարությամբ և նրա առաջադրանքներով։ Մարիա Վոլֆը Թբիլիսիում ընակություն էր հաստատել Մինգրելսկի գնդի ծառայող Վիկտոր Շվարցի բնակարանում, որտեղ հաճախ հավաքվում էին գնդի ծառայողները, ստեղծվում էր մտերիմների շրջան, ծավալվում էին աշխուժ վեճեր. այդ բոլորի ընթացքում Մարիա Վոլֆը գրի էր առնում ռազմական հետախույզին անհրաժեշտ շատ տվյալներ։ Վոլֆը մտերմական ծանոթություն էր հաստատել նաև երկրորդ հրաձգային գնդի կապիտան Վլադիմիր

---

[1] Վրաց. ՍՍՌ Կենտր. Պետ. Արխիվ. ֆ. 8, գ. 19. թ. 1—2։
[2] Նույն տեղում, թ. 2—3։
[3] Վրաց. ՍՍՌ Հոկտ. Ռևոլ. Կենտր. Արխիվ, ֆ. 3, գ. 13, թ. 226—230։

Վիտոշնիկովի հետ, որին այցելում էր հաճախակի, նրա միջոցով ծանոթանում էր ուրիշ զինվորականների հետ։ Վոլֆը «Լոնդոն» հյուրանոցում հանդիպումներ էր ունենում գերմանական գործակալների հետ, հաճախ այցելում էր Կովկասյան Թանգարանը, լինում էր Շմիդտի և Պֆեցենմայերի մոտ։ 1913 թվի օգոստոսին Շուլենբուրգը Մարիա Վոլֆին ուղարկեց Գրոզնի։ Այդ ժամանակ Գրոզնու շրջանում ձևավորվում էր Կովկասյան երրորդ բանակային կորպուսը։ Վոլֆին առաջադրանք էր տրվել պարզել այդ կորպուսի ձևավորման բոլոր մանրամասնությունները—զորքի կազմը, զինվորությունը, նրա առաջ դրված խնդիրները։ Մարիա Վոլֆը Գրոզնիում մի քանի օր մնալուց հետո մեկնեց Վոզդվիժենսկի գյուղը և ծանոթներից բերած նամակներով ներկայացավ այնտեղ ապրող գործաթող գեներալ Գրիգորևիչին։ Այդպիսի մարդու մոտ կանգ առնելը վստահություն է հարգանք առաջ բերեց դեպի քողարկված լրտեսուհին։ Այդ գյուղում էր կանգնած նաև կովկասյան երրորդ սակրային գումարտակի շտաբ-բնակարանը։ Մարիա Վոլֆը ծանոթացավ սպաներ Գոլովինի և Լուգինի հետ։ Հետագայում նա մտերմացավ նաև ուրիշ սպաների և այլ աստիճանավորների հետ, ամբողջ օրը պտտում էր նրանց շրջանում, հավաքում իրեն անհրաժեշտ նյութերը և ուղարկում Շուլենբուրգին։ Վոզդվիժենսկի շրջանում դասավորված զորքերի դիսլոկացիան և դրությունը երկու ամիս ուսումնասիրելուց հետո, մի գիշեր Մարիա Վոլֆը աննկատելիորեն անհետացավ։ Նրան «հյուրընկալող» ծանոթ սպաները տնից-տուն էին անցնում և փնտրում։ Այդ ժամանակ «Մարիան արդեն անցավ Թերեքը, Ռոստովը և ճանապարհվեց Գերմանիա»։[1] Հետախուզական տեղեկությունները գլխավոր շտաբին հանձնելով, Մարիան մի քանի ամսից հետո, Օդեսայի վրայով, նավով վերադարձավ Բաթումի, Թբիլիսի և շարունակեց իր գործը։ Այս անգամ Մարիա Վոլֆը փոխեց ծանոթների շրջանը։ Նրան խիստ ցուցում էր տրվել, հնարավոր կասկածները ցրելու համար, հեռու մնալ նախկին ժաերիմներից և ծանոթներից։ Մարիան ծանոթացավ պրուսացի Գերտրուդ Ֆրեդելի և հունահպատակ նկարիչ Սերգեյ Կանտամիրովի հետ, որոնք կատարում էին հատուկ առաջադրանքներ։ Մարիան պետք է օգներ և վերահսկեր նրանց գործունեությանը։ Կանտամիրովի նկարչական արհեստանոցում կատարած խուզարկությունից պարզվեց, որ այդ արհեստանոցում կուտակվել էին 400 նեգատիվներ և լուսանկարներ, որոնք ներկայացնում էին Կովկասյան երկրամասի ամենակարևոր ռազմա-ստրատեգիական օբեկտները։ Կանտամիրովի ավագ տղան ծառայում էր Կոստանդնուպոլսում, իսկ կրտսեր որդին իր կնոջ հետ ապրում էր Մոսկվայում և դրաղվում գերմանական հետախուզության առաջադրանքների կատարումով։[2] Մարիա Վոլֆը հաճախ այցելելով Կանտամիրովի բնակարանը և արհեստանոցը, փոխանցում էր Շուլենբուրգի տված առաջադրանքները և հետևում նրանց կատարմանը։

1914 թվի վաղ գարնանը Շուլենբուրգը մեկնեց Գերմանիա։ Մարիա Վոլֆը նրան ուղեկցեց մինչև Բաթումի նավահանգիստը։ Շուլենբուրգի բացակայության ժամանակ Մարիան հաճախում էր Ուրբասի բնակարանը և գեկուցագրերը ներկայացնում նրան։ Մինչև համաշխարհային պատերազմ

1 Կովկ. Օկր. Շտաբի Ռազմա-պատմ. Արխիվ, ֆ. 85, գ. 130, թ. 1։
2 Նույն տեղում, ֆ. 85, գ. 116, թ. 46—47։

սկսվելը Մարիա Վոլֆը Կովկասում կատարում էր Թբիլիսիի կենտրոնի առաջադրանքները։ Պատերազմի առաջին օրերին լրտեսուհին ճարպկորեն փախավ Գերմանիա։

Շուլենբուրգի գործակալներից մեկն էլ հանդիսանում էր „Kaukasische Post" թերթի նախկին հրատարակիչ Ալեքսանդր Մոսլերը։ Հրատարակչական աշխատանքից վերցնելով, գերմանական հետախուզությունը նրան օգտագործում էր ռազմական առաջադրանքների կատարման համար։ Մոսլերը գերմանական շտաբային փորձված սպաներից էր։ Նա սկզբում համարվում էր թերթի հրատարակիչը, հետո թերթը թողեց և հանդես եկավ որպես «Արտասահմանում գերմանացիներին պաշտպանող ընկերության» անդամ, որը լեգալ պաշտոն էր վարում Կովկասում։ Մոսլերը Շուլենբուրգի հանձնարարություններով մեկնում էր գերմանական գաղութները, ֆերմաները, շրջում էր Կովկասյան նահանգները։ Նա հաճախ կանգ էր առնում իր մտերիմ բարեկամի՝ հայտնի գերմանոֆիլ կալվածատեր կոմս Կուչենբախի և խոշոր գաղութարար Կրեմերի մոտ, որոնք ապրում էին Մարիենֆելդ գաղութում և իրենց հարստությունից խոշոր միջոցներ էին հատկացնում գերմանական շահերի օգտին ծախսելու։ Երբ Եվրոպայում պատերազմ սկսվեց, Մոսլերն ավելի ակտիվացրեց իր գործունեությունը հատկապես գերմանացիներին կազմակերպելու և ռուսական բանակի պաշտպանությունը քայքայելու ուղղությամբ։ 1914 թ. օգոստոսի 5-ին Թբիլիսիի ժանդարմական վարչությունը հետևյալն է հաղորդում նահանգական ժանդարմական կորպուսին.

«Մեր ստացած տեղեկությունների համաձայն, Թիֆլիսում գերմանական թերթի նախկին աշխատակից ոմն Մոսլերը, Գերմանիայի հետ պատերազմ սկսվելու օրից, Կովկասում եղած գերմանական գաղութների և մյուս քաղաքացիների մեջ մղում է բացահայտ ագիտացիա և նրանց կազմակերպում է Գերմանիային օգնություն ցույց տալու, գաղութարարներին հավաքագրելու ճանապարհով և նշված պետության օգտին դրամական նյութական միջոցներ հավաքելով»։[1]

Մոսլերի գործունեությունն աննկատելիորեն գիտելով, ժանդարմական հատուկ կորպուսը 1914 թ. օգոստոսի վերջերին նրան ձերբակալեց որպես ռազմագերու և լրտեսի։

Գերմանական նշանավոր հետախույզ Էմանուիլ Լակոնը 1911 թ. Իրանի վրայով եկավ Երևան, այնտեղից գնաց Կարս, Բաթումի, Սև ծովի ափերով գնաց Կուրան, Գրոզնի, Բաքու, Թբիլիսի։ Լակոնի փաստաթղթերը ցարական իշխանություններին հավատացնում էին, որ նա տուրիստ է։ դեռևս 1905 թ. Կարս է եկել Գերմանիայից՝ ոտքով երկրագնդի շուրջը ճանապարհորդություն կատարելու նպատակով։ Այդ «ճանապարհորդը» 1912 թվի սեպտեմբերին Թբիլիսիից լեռնանցքներով անցավ դեպի Ռուսաստան, հայտնելով, թե գնում է Սիբիր, Հեռավոր Արևելք, շարունակելու իր ճանապարհորդությունները։ 1912 թ. սեպտեմբերից մինչև 1913 թ. սկզբները Լակոնի մասին ոչինչ հայտնի չէր։ Այդ ժամանակ էլ Օգեսայի հակահետախուզական բաժինը Կովկասյան օկրուգի շտաբին գրած իր գաղտնի գրությամբ հայտնում է, թե «ճանապարհորդ Էմանուիլ Լակոնը լրտես է և

[1] Վրաց. ՍՍՌ ԿԿՆարք. Պետ. Արխիվ, ֆ. 3, գ. 721, թ. 39.

աշխարհի շուրջը ոտքով անցնելու վերսիան հորինվել է կոնսպիրացիայի նպատակով։ Մի քանի ամիս հետո Կովկասյան օկրուգի շտաբում ստացված մի զեկուցագրի մեջ հաղորդված է.

«Ավստրիական հպատակ, հետիոտն Էմանուիլ Լակոնը եկել է Ռուսաստան ռազմական հետախուզության նպատակով։ Նա կովկասյան զինվորական օկրուգի տերիտորիայից դուրս ոչ մի տեղ չի գնացել, այլ միայն մի նահանգից անցել է մյուս նահանգը, նրանցից մի քանիսն այցելելով երկու, իսկ մի քանիսն էլ երեք անգամ։»[1]

Այդ տեղեկություններից հետո Կովկասյան ժանդարմական օրգաններն սկսեցին որոնել «աշխարհի շուրջը» քայլող «տուրիստին»։ Իսկ Էմանուիլ Լակոնը երկու տարի շրջում էր Կովկասի գավառները։ 1912 թ. հունվարին նա եղավ Բաքվում, մինչև մայիս ամիսը շրջում էր Բաքվի նահանգի քաղաքները, շրջանները և գյուղերը։ Նա գնաց Ղարաբաղ, մի քանի օր կանգ առավ Շուշում, անցավ լեռները, ձորերը, գյուղերը։ Մայիսին Լակոնն արդեն Նորից Երոզնիումն էր, որտեղ Նավթահորերը մեկ ամիս դիտելուց հետո գնաց Վլադիկավկազ։ Հուլիսին Լակոնը հիանում էր Կուրտնի ցորենի արտերով, իսկ օգոստոսին ոտքով չափում էր կովկասյան ծովափերը Նովորոսիյսկից մինչև Սոչի։ Օգոստոսին նա վերադարձավ Մայկոպ, մեկ ամիս անցկացրեց քաղաքում, որից հետո գնաց Ստավրոպոլ։ Նոյեմբերին Լակոնը երևաց Դիորդիևսկում և հանքային ջրերի շրջաններում։ Ուշ աշնան ցրտերը արգելք չհանդիսացան համառ «ալպինիստի» համար։ Նա ռազմավիրական ճանապարհով անցավ լեռնաշղթան, դեկտեմբերին արդեն ծպտյալ կերպով թափառում էր Թբիլիսիի նահանգում, առանց մտնելու Թբիլիսի քաղաքը։ 1913 թ. հունվարին Լակոնը Նորից մեկնեց Ադրբեջան։ Նա անցավ նախ Ելիզավետպոլի նահանգը, որտեղից մեկնեց Սալյան, Լենքորան, Ղուբա, Բաքու։ Լակոնը զարմանալի հիշողության տեր մարդ էր։ Նա ոչ մի ծոցատետր չէր պահում իր մոտ։ Բոլոր դիտողությունները պահում էր մտքում և հետո զեկուցում։ Լակոնը Թբիլիսի չայցելելով, այնուամենայնիվ, փոխանցող գործակալների միջոցով ամենասերտ կապեր ուներ Շուլենբուրգի և Ուրբասի հետ և իր հավաքած ռազմական հետախուզական տեղեկությունները հաղորդում էր Թբիլիսիի կենտրոնին։ Լակոնը «շուրջերկրյա» ճանապարհորդության ընթացքում ոտքով մի քանի անգամ անցավ Նախիջևանից—Երևան, Կարս, Բաթումի, Կուբան, Հյուսիսային Կովկաս, Բաքու և Ադրբեջանի այլ վայրերը, Թբիլիսի։ Նա անցավ Կովկասի կածաններն ու կիրճերը, երկաթուղային կամուրջներն ու թունելները, տեսավ աղբյուրներն ու դետերը։ Նա անձնական գննությամբ որոշել էր, թե որտեղ, տարվա որ եղանակին զորքին կարելի է հանդիստ տալ, ջրից օգտվել, կամ անցում կատարել և ինչպիսի միջոցներով։ 1905 թվին հայրենիքից դուրս գալիս հետիոտն «տուրիստը» 25 տարեկան երիտասարդ էր։ 1913 թ. գարնանը նա արդեն 33 տարեկան մարդ էր։ Եթե Լակոնը ոտքով վերադառնար հայրենիք, նույնիսկ նրա մոտիկ հարազատները չէին ճանաչի նրան, որովհետև Կովկասի լեռնային օդը, կլիման և տարիների հետախուզական անդադրում որոնումները բոլորովին փոխել էին նրա արտաքին տեսքը։ Բայց Լակոնը հայրենիք չվերադարձավ։ Ծա-

[1] Կովկ. Օկր. Շտաբի Ռազմա-դատ. Արխիվ, ֆ. 83, գ. 116. թ. 48—49.

բական ժանդարմական հետախույզները Ղուբայում դտան Լակոնին և հանձնեցին Բաքվի ժանդարմական վարչության ձեռքը։ Կովկասյան օկրուգի շտաբի պահանջով նա Բաքվից փոխադրվեց Թբիլիսի և ամուր փակվեց Մետեխի բերդի խցիկներից մեկում։[1] Խուզարկության ժամանակ Լակոնի մոտ բացի «հավաշխարհային պրոպուսկից» ուրիշ գրեթե ոչ մի այնպիսի փաստաթուղթ չէին գտել, որից երևային նրա անմիջական կապերը Շուլենբուրգի և Ուրբասի հետ։ Ուստի վերջիններս այնպես էին ձևացնում, որ իբր թե նրանք նույնիսկ չեն էլ ճանաչում Լակոնին, նրա բանաարկության հարցով բոլորովին էլ չէին հետաքրքրվում։ Բայց խոշոր լրտեսի այդպիսի վախճանը մեծ տագնապ և ներքին անհանգստություն առաջ բերեց գերմանական և թյուրքական գործակալության Թիֆլիսի կենտրոնում։ Այդ և դրա նման մի քանի ուրիշ դեպքերից հետո Շուլենբուրգն իր մոտ կանչելով ավստրիական հյուպատոս Ուրբասին և թյուրքական հյուպատոս Մունի Սուրիա բեկին, ինչպես այդ մասին պատմում է Հասան բեկը, պահանջում է. «... Անմիջապես ձեռք առնել նախազգուշական միջոցներ...»։[2]

Շուլենբուրգի գործակալների թիվը մեծ էր։ Նրանց գործունեության ձևերն ու մեթոդները բազմազան էին։ Շուլենբուրգի գլխավորած կենտրոնին էին հաշիվ տալիս ոչ միայն գերմանական, այլև Գերմանիայի դաշնակիցներ Ավստրիայի և Թյուրքիայի գործակալները։ Ավստրո-գերմանական գործակալների միջև հաճախ դժվար էր որևէ տարբերություն դնել։ Թյուրքական գործակալների մասին կխոսենք հաջորդ բաժնում։

4

Գերմանական գործակալները, հաշվի առնելով Կովկասի բնակչության բազմազգ կազմը և կենցաղային առանձնահատկությունները, յուրաքանչյուր խավի մեջ աշխատում էին համապատասխան ծրագրով և մեթոդներով։ Այս բաժնում կխոսենք այն գործակալների մասին, որոնք աշխատում էին մուսուլմանական բնակչության մեջ 1912—1913 թվականներին։

Գերմանական գործակալության Թբիլիսիի կենտրոնը թյուրքական հետախուզությանն ուղղություն և ղեկավարություն տալով, նրան օգտագործում էր իր գլխավոր խնդիրները կատարելու համար։

Թյուրքական հետախուզությունը համեստաբար գործելով գերմանական հետախուզության ղեկավարության ներքո և կատարելով նրա առաջադրանքները, միաժամանակ նպատակ ուներ օգտագործել գերմանացիներին իր շահերի օգտին։ Թե գերմանացիները և թե թյուրքերն ընդհանուր ատելությամբ էին լցված դեպի Ռուսաստանը և նրա կազմի մեջ մտնող մյուս ժողովուրդները։ Նրանք երկուսն էլ ձգտում էին մասնատել այդ երկրները և գավթել նրա մասերը։ Այդ հողի վրա էլ առաջ էր գալիս գերմանա-թյուրքական գործակալության համատեղ գործունեությունը։ Եթե ինվերի համար գերմանական գլխավոր շտաբի ռազմական դոկտրինան հանդիսանում էր լավագույնը, ապա թյուրքական հետախույզների համար գերմանական լրտեսության գայլեր Շուլենբուրգի և Անգերսի գործունեու-

[1] Վրաց. ՍՍՌ կենտր. Պետ. Արխիվ. ֆ. 85. գ. 103, թ. 12։
[2] Վրաց. ՍՍՌ Հոկտ. Ռեալ. կենտր. Արխիվ. ֆ. 3, գ. 160, թ. 163։

թյան միջոցներն ու ձևերը հանդիսանում էին ամենաիդեալականը։ Այդ զուգադիպումների հիմքի վրա էլ կառուցվում էր գերմանա-թյուրքական գործակալության համատեղ աշխատանքը։

1912—1913 թ. թ. Բալկանյան պատերազմների ժամանակ Թյուրքիան ճնշելով Արևմուտքում իրենից կախման մեջ գտնվող ժողովուրդների ազատագրական պայքարը, չափազանց անհանգստանում էր իր արևելյան տիրապետությունների վիճակով։ Օսմանյան կառավարությունը նախազգում էր, որ Արևելքում սուլթանական լծի տակ հեծող ժողովուրդները կարող են զինված ելույթ ունենալ և օսմանյան պետությունը կանգնեցնել կործանման առաջ։ Իսկ արևելյան վիլայեթներում Թյուրքիայի համար ճակատագրական նշանակություն կարող էր ունենալ Ռուսաստանի միջամտությունը։ Ահա թե ինչու Թրիլիսի ժամանելով, կոմս Շուլենբուրգը ձեռնարկեց Գերմանիայի հավատարիմ դաշնակից Թյուրքիային օգնություն ցույց տալու և նրա շահերը պաշտպանելու գործը, դրա համար գործի դնելով հենց իրենց՝ թյուրքական գործակալներին։

Թյուրքական գործակալները Շուլենբուրգից դեկավարություն և առաջադրանքներ էին ստանում Թբիլիսիում թյուրքական հյուպատոս Ռեմզի բեկի, իսկ նրանից հետո Մունիր Սուրիա բեկի միջոցով։ Շուլենբուրգի դեկավարությամբ և Մունիր Սուրիա բեկի տված առաջադրանքներով էին աշխատում Բաքվում, Բաթումիում, Երևանում, Կարսում, Նախիջևանում եղած թյուրքական հետախույզները։ Նրանց մեջ ամենից նշանավոր գործակալներից մեկն էր Հասան բեկը։ Գրավելով Կարսի թյուրքական հյուպատոսության քարտուղարի պաշտոնը, նա հիմնականում աշխատում էր Թբիլիսիում՝ Շուլենբուրգի, Լորցի և Մունիր Սուրիա բեկի հետ, կատարելով հետախուզական առաջադրանքներ։ Բալկանյան պատերազմների օրերին թյուրքական գլխավոր շտաբը Հասան բեկի միջոցով ստանում էր հետախուզական տեղեկություններ Կովկասում կատարվող իրադարձությունների մասին, որոնք կարևոր էին թյուրքական պետության ռազմական քաղաքականության համար։ Այդ տեղեկությունները հավաքելու և հաղորդելու գործում Հասան բեկին խոշոր աջակցություն էին ցույց տալիս գերմանացիները, հատկապես Շուլենբուրգը։ Այդ մասին վկայում է ինքը՝ Հասան բեկը, որը թյուրքական գլխավոր շտաբին ուղարկած իր դեկուցագրերից մեկում հիշատակում է.

«Եթե չլիներ Շուլենբուրգը, ես ոչ մի դեկուցագիր չէի կարող ուղարկել»[1]

Հասան բեկը մասնակցում էր Շուլենբուրգի գլխավորած կենարոնում տեղի ունեցող ներքին իրադարձություններին, կատարում էր խոշոր առաջադրանքներ և կազմակերպում ու իրականացնում էր կարևոր ձեռնարկումներ։ 1913 թ. հունվարին Հասան բեկը Շուլենբուրգի հանձնարարությամբ մեկնեց Բաքու, հանդիպում ունեցավ թյուրքական հյուպատոսության աշխատակիցների հետ, այնուհետև նա մեկնեց Թեհրան՝ մի շարք կարևոր առաջադրանքներ կատարելու նպատակով։ Այստեղ ժամանելիս Հասան բեկին մեծ հանդիսավորությամբ դիմավորեցին գերմանական և թյուրքական գլխավոր դեսպանությունների աշխատակիցները։ Պարսկաս-

1 Վրաց. ՍՍՌ Հոկտ. Ռևոլ. կենտր. Արխիվ. ֆ. 3, գ. 160, թ. 143։

տանում իր առաջադրանքները կատարելուց հետո Հասան բեկը մեկնեց Հարավային Հայաստանի վիլայեթները, շրջեց քաղաքներն ու գյուղերը և մանրամասն ուսումնասիրեց հայ բնակչության տրամադրություններն ու վերաբերմունքը դեպի Բալկանյան պատերազմների հետ կապված իրադարձությունները։ Այդ նույն ժամանակ էրզրում ժամանեցին թյուրքական գըլիսավոր շտաբի հետախույզ սպաներ Ռեֆատ բեկը և Մուստաֆա էֆենդին։ Հանդիպելով Հասան բեկին, նրանք քննարկեցին նոր առաջադրանքները կատարելու խնդիրները։ Հասան բեկը մեկնեց Կ. Պոլիս և կարճ ժամանակից հետո վերադարձավ Կարս։ Ռեֆատ բեկի և Մուստաֆա էֆենդիի երեվալը էրզրումում անկասելի չմնաց ռուսական հյուպատոսության ուշադրությունից։[1] Թյուրք գործակալները դիմեցին խորամանկության։ Նրանք մի երեկո ցույց կազմակերպեցին, իբր թե վերադառնում են Կ. Պոլիս։ Գիշերը, հագնելով չերքեզական կոստյումներ, համապատասխան փաստաթղթերով, որպես «ոչխար գնողներ» դնացին Իգդիր, այնտեղից Երևան, որտեղ որոշ ժամանակ աշխատելուց հետո վերադարձան Կարս։ Կարսում նրանց սպասում էին թյուրքական հյուպատոս Զեմալեդդին բեկը և նրա քարտուղար Հասան բեկը։ Տեղի ունեցավ նոր խորհրդակցություն և լրտեսներին տրվեցին նոր առաջադրանքներ։ Ռեֆատ բեկը և Մուստաֆա էֆենդին ստանալով նոր առաջադրանքներ, չերքեզական հագուստով, գնորդի անվան տակ, հանապարհվեցին Կովկասյան Զինվորական Օկրուգի տերիտորիան, որտեղ նրանք հետևում էին գորքերի տեղաշարժերին, փոփոխություններին և զեկուցում Հասան բեկին ու Զեմալեդդին բեկին։ Այդ ժամանակ կովկասյան բանակում նոր բանակային կորպուս ձևավորվելու կապակցությամբ զորամասերի որոշ տեղաշարժեր կատարվեցին։ Այդ տեղաշարժերը ամենաուշադիր դիտողության էին արժանանում թյուրքական հետախույզների կողմից։ 1913 թ. հունվարին Զեմալեդդինը Կարսից մի ծածկագիր զեկուցագիր ուղարկեց Կ. Պոլիս, որի մեջ մանրամասն հիշատակված են կովկասյան բանակում տեղի ունեցող փոփոխությունները և կովկասյան օկրուգի զինապահեստներից դեպի արևմտյան օկրուգները զենք փոխադրելը։[2]

Կովկասյան ժանդարմական կորպուսում տեղեկություններ ստացվեցին, որոնք հաստատում էին, որ այդ հետախուզական ամբողջ աշխատանքը կատարվում է Հասան բեկի միջոցով։ Հասան բեկը վտանգ նախազգալով, շտապ մեկնեց Կ. Պոլիս։ Շուլենբուրգի գործակալները թյուրքերին զգուշացրին, թե ցարական ժանդարմերիան որոնում է Հասան բեկին։ Շուլենբուրգը խիստ տագնապով այցելեց թյուրքական և ավստրիական հյուպատոսությունները և իր կոլեգաներին հայտնեց. «Ռուսական կառավարության ժանդարմական հատուկ ծառայողներ հետևում են Հասան բեկին, նրա հետքերով»։[3] Հասան բեկն այլևս Կ. Պոլսից Կովկաս չվերադարձավ։ Երեք հյուպատոսներն էլ ձեռք առան մի շարք նախազգուշական միջոցներ, իրենց գործակալներին ավելի խորը քողարկելու և մերկացումից պաշտպանելու համար։

---

[1] Կովկ. Օկր. Շտաբի Ռազմ-գաղտ. Արխիվ, ֆ. 85, գ. 108, թ. 7։
[2] Նույն տեղում, ֆ. 85, գ. 108, թ. 8։
[3] Վրաց. ՍՍՌ Հոկտ. Ռևոլ. Կենտր. Արխիվ, ֆ. 3, գ. 160, թ. 143։

Գերմանա-թյուրքական գործակալների մի խոշոր գաղտնի կազմակերպություն գործում էր «Թյուրքական և պարսկական բարեգործական ընկերություն» անվան տակ։ Շուլենբուրգի համաձայնությամբ թյուրքական հյուպատոսը Թրիլիսիում ստեղծեց «Թյուրքական և պարսկական բարեգործական ընկերություն», որի լեգալ ծրագրի մեջ մտնում էր լուսավորական-կուլտուրական և բարեգործական աշխատանքների ծավալումը Կովկասի մուսուլմանական ժողովուրդների մեջ։ Այդ «ընկերության» մեջ ընդգրկվեցին ամենից վստահելի գործակալներ։ Ընկերության գլուխ դրվեց մոլի պանիսլամիստ և պրովոկատոր Ախունդ Մոլլա Մահմեդ-Հասան Մոլլա-Զադեն, որը դիմում էր ամեն տեսակի միջոցների՝ Շուլենբուրգի և Մունիր Սուրիա բեկի առաջադրանքները կատարելու համար։ Այդ ընկերությունն ստեղծեց իր բաժանմունքները Բաքվում, Երևանում, Ելիզավետպոլում, Բաթումիում և ուրիշ քաղաքներում։ Ընկերության գործունեությունը ծավալվում էր նրան կից գործող զանազան հիմնարկների ցանցում տեղավորված հետախույզների միջոցով։ Այդպիսի հիմնարկներից մեկն էր «Իտտիֆակ» կոչվող դպրոցը։ Նրանում ընդգրկված հարյուրավոր երեխաները դաստիարակվում էին պանիսլամիստական ոգով և դեպի Ռուսաստանը թշնամական զգացմունքներով։ Դպրոցի դասատուներն ընտրվել էին թյուրքական գլխավոր շտաբի համաձայնությամբ, իսկ դիրեկտոր Բախա-Սայիդ բեկը գործուղված էր Կ. Պոլսից՝ հետախուզական հատուկ առաջադրանքով։ Նա Կ. Պոլսից իր հետ բերել էր ֆարսերեն լեզվով տպված մի գիրք, որով ղեկավարվում էին դասատուները։ Այդ գիրքը պանթյուրքիզմի թեորետիկներից մեկի՝ Ահմեդ Խելիմի աշխատությունն էր։ Հեղինակը ընդհանուր կերպով շարադրելով աշխարհի բոլոր մուսուլմաններին մեկ դրոշի տակ համախմբելու անհրաժեշտությունը, կոնկրետացնում է Կովկասի և Թուրքեստանի մուսուլմաններին կազմակերպելու և թյուրքական սուլթանի դրոշի տակ առնելու խնդիրը։ Նա բացարձակ կերպով հարց էր դնում Կովկասն ու Թուրքեստանը անջատել Ռուսաստանից, գցել Թյուրքիայի դերիշխանության տակ։[1]

«Բարեգործական ընկերության» կից գործում էր թատերական խումբ, որը կազմված էր «Իտտիֆակ» դպրոցի ուսուցիչներից և այլ անձնավորություններից։ Այդ թատերական խումբը «գնում էր գաստրոլներին», ելույթներ էր ունենում հեռավոր, խուլ շրջաններում և գյուղերում, մուսուլմանական հետամնաց խավերի մեջ։ Թատերական խմբում ընդգրկած գործակալները աշխատում էին ժողովրդի մեջ բորբոքել ազգայնական կրքեր։ Թշնամանք դեպի ռուսները, հայերը, վրացիները, հավաքում էին ռազմական նշանակություն ունեցող տեղեկություններ և հանձնում Մունիր Սուրիա բեկին, իսկ վերջինս զեկուցում էր Շուլենբուրգին։

Գերմանա-թյուրքական գործակալների կարևոր հավաքատեղերից էին «Բարեգործական ընկերության» բաց արած «չայխանաները»։ Այդ ընկերության գործակալ Շաքիր էֆենդին Թբիլիսիում պահում էր այսպես կոչված «Ստամբուլ» չայխանան, որը մի շարք բաժանմունքներ ուներ քաղաքի տարբեր թաղերում, հատկապես խուլ անկյուններում։ «Բարեգործական ընկերության» մյուս գործակալը՝ Շեմախ Բեմալ էֆենդին ղեկավա-

1 Վրաս. ՍՍՍՌ կենտր. Պետ. Արխիվ, ֆ. 4, գ. 37, թ. թ. 113—130։

րում էր «Շյարկ» կոչվող տպարանը և վիմագրատունը, որտեղ, բացի լեզալ հրատարակություններից ու ֆանր պատվերներից, տպվում էին նաև գաղտնի պանիսլամիստական թռուցիկներ ու պլակատներ։ Այդ ընկերության գործակալների հանգրվանը Հյուսիսային Կովկասում ծառայում էր Դաղստանի Պետրովսկ քաղաքում պահվող «Իսլամ» հյուրանոցը, որի բոլոր ծախսերը ծածկվում էին «Բարեգործական ընկերության» միջոցներով։

Թյուրքական գործակալները տեղադրվելով արտաքուստ քաղաքականությունից հեռու կանգնած այդ հիմնարկներում, գաղտնի կերպով կատարում էին լրտեսական-հետախուզական առաջադրանքներ, որ նրանց տալիս էր Թյուրքական հյուպատոս Մունիր Սուրիա բեկը։

«Իտտիֆակ» գպրոցի ակումբում սիստեմատիկ կերպով կազմակերպվում էին երեկոներ, արեելյան համերգներ, ժողովներ, որոնց սովորաբար ներկա էին գտնվում Մունիր Սուրիա բեկը, Հասան բեկը և Շուլենբուրգի ուրիշ գործակալներ։[1] Այդ երեկոներն օգտագործվում էին հետախուզական զեկուցագրերն ընդունելու և նոր առաջադրանքներ տալու համար։

«Բարեգործական ընկերությունը» կազմակերպել էր նաև պանթյուրքիստական գաղտնի գրականության տարածումը Կովկասում։ Այդ գործը կատարվում էր պարսկահպատակ Միրզա Ռահիմ Հուսեին-Օղլու միջոցով, որի գրավաճառանոցը հանդիսանում էր մի գաղտնի բաղա՝ Գերմանիայից և Թյուրքիայից ստացվող գրականությունն ընդունելու և տարածելու համար։[2]

Շուլենբուրգի և Մունիր Սուրիա բեկի գործակալները, որոնք աշխատում էին մուսուլմանական բնակչության մեջ, շատ էին։ Նրանցից շատերը նույնիսկ իրար չէին ճանաչում և գործում էին անկախ կերպով, բայց նրանց բոլորի կատարած խնդիրներն ուղղված էին մեկ նպատակի։ 1913 թվի հունիսին Կովկասյան օկրուգի հետախուզական բաժինը մի զեկուցագիր է կազմել ռուսական բանակի գլխավոր շտաբին ներկայացնելու համար։ Այդ փաստաթղթում հաղորդված է Գերմանիայի և Թյուրքիայի օգտին լրտեսությամբ զբաղվող մի խումբ անձնավորությունների մասին և պահանջվում է նրանց բոլորին արտաքսել Կովկասյան երկրամասից։ Գերմանական խոշոր գործակալներին բնութագրելուց հետո զեկուցագրում շարադրված է Թյուրքական 44 գործակալների ռազմական-լրտեսական և քաղաքական-պրոպագանդիստական գործունեության մասին։ Նրանք ուղարկվում էին Կովկասի գլխավոր քաղաքներն ու ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող կետերը։ Այդ գործակալների մի խումբը գործում էր Կարսում՝ Այի էֆենդի Խոսրով Զաղեի գլխավորությամբ, մյուս խումբը Թբիլիսիում՝ Շարիֆ Ռոստոմ բեկի գլխավորությամբ, մի խումբը Բաքուում՝ Լյութֆի Ամիր էֆենդու գլխավորությամբ, մի խումբն Արդահանում՝ Մահմեդ Բալա-Օղլու գլխավորությամբ, իսկ մի խոշոր խումբն էլ աշխատում էր Երևանում՝ Կարբալան Ջալիլի գլխավորությամբ։[3]

Թյուրքական այս գործակալները Թբիլիսիի կենտրոնից հրահանգավորում և առաջադրանքներ ստանալով, վազում էին այնտեղ, ուր ռուսական զորքեր կային, ուր ռազմական-պաշտպանական որևէ աշխատանք էր կա-

[1] Վրաց. ՍՍՌ. կենտր. Պատմ. Արխիվ. Ֆ. 4, գ. 57, թ. թ. 188—195։
[2] Նույն տեղում, Ֆ. 8, գ. 116, թ. 12։
[3] Կովկ. Օկր. Ռազմա-պատմ. Արխիվ. Ֆ. 85, գ. 19, թ. թ. 13—14։

տարվում։ Նրանք մուսուլմանական խավար ժողովրդի մեջ ագիտացիա էին տանում և աշխատում հավատ ներշնչել դեպի գերմանա-թյուրքական բարեկամության հեռանկարները։ Հավաքած տեղեկությունների մասին հաշվետվությունները դանազան հանապարհներով ներկայացվում էին Թրիլիսի՝ Մունիր Սուրիա բեկին, իսկ վերջինս ներկայացնում էր Շուլենբուրգին և Գ. Գոլիս՝ Էնվեր փաշային։

5

Մենք հավատոտակի շարադրեցինք գերմանական գործակալության Թրիլիսիի գլխավոր կենտրոնի հյուղերի գործունեությունը։ Այս ենթադրվում կքննարկենք Թրիլիսիի կենտրոնի բուն ներքին կյանքը, այն աշխատանքը, որ տարվում էր Շուլենբուրգի գործակալներից ստացված զեկուցագրերի «մշակման» և դրանք գերմանական գլխավոր շտաբին ու կայսերական արտաքին գործերի մինիստրությանը հաղորդելու ուղղությամբ, ինչպես և կպատմենք այն հրահանգներից ու դիրեկտիվներից մի քանիսի մասին, որոնք ստացվում էին Բեռլինից՝ Կովկասում աշխատող գերմանա-թյուրքական հետախույզների համար։

1914 թ. օգոստոսի 28—29-ին Թրիլիսիի գերմանական հյուպատոսությունում և Շուլենբուրգի բնակարանում կատարված խուզարկության հետեանքով հայտաբերված փաստաթղթերը մինչև այժմ ճռալով գաղտնի արխիվների ընդերքում, հայտնի չեն դարձել մեր հասարակությանը, չեն լացահայտվել նրանց մեջ պարունակվող հանցագործությունները։ Թրիլիսիի գաղտնի կենտրոնից ռազմա-հետախուզական զեկուցագրերը գնում էին երեք ուղղությամբ—դեպի Բեռլին՝ Վիլհելմշտրասե և Ֆրիդրիխշտրասե, դեպի Պետրոգրադ՝ Գուրտալեսին, դեպի Գոլիս՝ Վայգենեյմին, Մանդերսին, Էնվերին։ Ռազմա-հետախուզական բոլոր զեկուցագրերը և այլ գրագրությունները կատարվում էին բացառապես ծածկագրերով (շիֆրով)։ Շուլենբուրգն աշխատում էր հինգ շիֆրերով։ Իվանագիտական և զինվորական-հետախուզական այդ ծածկագրերը հաճախ փոփոխվում էին, որպեսզի ոչ մի կերպ չհայտաբերվի նրանց կարդալու բանալին։ Այդ հինգ ծածկագրերը կազմում էին հինգ հաստափոր գրքեր, որոնք պահվում էին բացառապես Շուլենբուրգի և Լորցի մոտ, նրանց վրա աշխատել թույլատրվում էր սահմանափակ թվով մարդկանց, միայն ամենավստահելի անձնավորություններին։ Այդ խիստ կոնսպիրացիան հնարավորություն էր տալիս Շուլենբուրգին ծածկագրերի միջոցով անկաշկանդ գործել, օգտագործելով հեռագիրը, փոստը, հատուկ սուրհանդակներ ուղարկելը։ Գերմանական գլխավոր շտաբի հրահանգիչ գնդապետ ֆոն Գլյատոն հաճախ Բեռլինից գալիս էր Թրիլիսի և ղեկավարում Թրիլիսիի կենտրոնի գործունեությունը։

Բեռլինում ծածկագրերն ստացվում և թարգմանվում էին Կայսերական արտաքին գործերի մինիստրության կից հատուկ օրգանում, որը կոչվում էր «Գերմանական գաղտնի բյուրո»։ Այդ գաղտնի բյուրոն ծածկագրերը թարգմանելով՝ պատճենները հանձնում էր կայսրին, մինիստրին և գլխավոր շտաբի պետին։

Դեռևս 1911 թ. Թյուրքիան երկու կորպուս մտցրեց Արևմտյան Պարսկաստանի սահմանը՝ Թյուրքիայի արեելյան նահանգների «անվտանգու-

թյունը պաշտպանելուն պատրվակով։ Սակայն ակնհայտ էր, որ Պարսկաստանի կողմից ոչ մի վտանգ չէր սպառնում Թյուրքիայի սահմաններին։ Թյուրքական կորպուսների մոտեցումը Կովկասի դռանը հետապնդում էր այլ նպատակ. այն էր՝ ներխուժել Կովկաս, գավթել Բաքուն։ Ռուսական հրամանատարությունը նախագգուշական միջոցներ ձեռք առավ Թյուրքիայի այդ հանդուգն քայլի դեմ։ Այդ ամենն ամենաուշադիր դիտողության էին ենթարկվում գերմանական հետախույզների կողմից։ Բեռլին ուղարկված մի ծածկագրում Թիֆլիսի գերմանական հյուպատոսությունը հաղորդել է.

«Այստեղ զինվորական ատիճանավորների շրջանում հավաստի լուրեր են տարածված այն մասին, որ Ռուսաստանը եռանդուն կերպով պատրաստվում է մտնելու Հյուսիսային Պարսկաստան։ Զուլֆայում զոկատներ են կազմվում։ Ռուսաստանը Խոյում հիմնում է դեսպանություն։ Երեկ Զուլֆայից դուրս եկավ մի առաջապահ զոկատ, որը կազմված էր 100 կազակներից»։[1]

1912 թ. մարտի 3-ին Շուլենբուրգը Թբիլիսիից Բեռլին ուղարկած մի ընդարձակ զեկուցագրում հաղորդում է Կովկասյան օկրուգի զորքի վիճակի մասին, դիսլոկացիայի մեջ կատարվող փոփոխությունների մասին։ Նրա զեկուցագրում մանրամասն նկարագրված են Թբիլիսիի զորանոցների դրությունը, գնդերի տակտիկական պատրաստության գնալու մարշրուտները, Կարսի և Բաթումիի բերդերի հրետանու մարտական ուժն ու հատկությունները։ Շուլենբուրգն իր զեկուցագրի վերջում խնդիր է դնում, որ դիվանագիտական վերջնագիր ներկայացվի Ռուսաստանին՝ Ուրմիայի շրջանը չմտնելու և պարսկական սահմաններում կատարվող իրադարձությունների հարցում ձեռնպահ մնալու պահանջով։

Նույն օրը Պետրոգրադից Շուլենբուրգի հասցեով ստացվել է հետևյալ ծածկագիրը.

«Ժ. Ա. Դ. Թիֆլիս 12. 3. 12. առիթ ունեցաք միջամտելու Կովկասում զորքի մոբիլիզացիոն պատրաստություններին։ Վերջին ժամանակներս Եվրոպական Ռուսաստանից զորքեր եկել են Կովկաս։ Պուրտալես»։[2]

Շուլենբուրգին երկար ժամանակ հարկավոր չէր։ Նա ուներ բոլոր ավյալները։ Հաջորդ օրը Պետրոգրադ ուղարկած պատասխան-հեռագրում նա զեկուցում է Կովկասյան բանակի «մոբիլիզացիոն պատրաստություններ» մասին, որից տագնապ էր առաջ եկել Պուրտալեսի դեսպանատանը։ Շուլենբուրգը հաղորդում է Կովկասում ռուսական զորքերի տեղաշարժերի մասին, նորից հիշեցնում է Պարսկաստանից Թյուրքերին դուրս վտարելու կապակցությամբ ռուսների ձեռնարկած միջոցառումների մասին։ Շուլենբուրգը հաստատ կերպով պնդում է, թե «Կովկասում ռուսների ձեռք առած բոլոր միջոցները հետապնդում են միակ նպատակ՝ խուսափել պատերազմական ընդհարումներից Թյուրքիայի հետ»։[3] Այսպիսով, իրեն՝ գերմանական խոշոր գործակալի գաղտնի դիտողությամբ հաստատվում է, որ Թյուրքերը թափանցելով Պարսկաստան, կանգնած էին Կովկասի սահմանագլխին, և

1 Վրաց. ՍՍՌ Հոկտ. Ռևոլ. կենտր. Արխիվ, ֆ. 3, գ. 187, թ. 181.
2 Նույն տեղում, թ. 182.
3 Նույն տեղում, թ. 183.

Ռուսաստանը միջոցներ էր ձեռք առնում Թյուրքերին Կովկասի դարպասներից ետ մղելու համար, ամեն կերպ խուսափելով «պատերազմական ընդհարումներից»։ 1913 թ. օգոստոսի 19-ին Պետրոգրադից գերմանական գլխավոր դեսպանը Թիֆլիս՝ Շուլենբուրգին է ուղարկել հետևյալ ծածկագիրը.

«Թիֆլիս, կայսերական հյուպատոսություն. № 4. 35. Կայսերական ռուսաստանյան գլխավոր դեսպանությունից գաղտնի։

Կայսերական գրասենյակի առաջադրանքով, խոնարհաբար խնդրում եմ ձերդ մեծության, հատուկ ուշադրություն դարձնել ռուսական զորքերի տեղաշարժերի վրա՝ գլխավորապես Կովկասի ներսում և գրսից դեպի Կովկաս։ Կայսերական դեսպանությանը ներկայացրեք զեկուցագրեր զորամասերի տեղաշարժերի, կայազորների փոփոխությունների մասին (ըստ որում կարևոր է ցույց տալ գումարտակները և զորամասերը), ինչպես և բանակի նոր դիսլոկացիայի մասին։ Խնդրում եմ ձերդ մեծություն, այդ գրությունը ցուցակագրել առանց ցույց տալու նրա բովանդակությունը։ Կայսերական գլխավոր դեսպան Պուրտալես»։

Մի այլ ծածկագրով Պուրտալեսը Շուլենբուրգին հայտնում է, թե իր մոտ ստացված տեղեկությունների համաձայն, Ռուսաստանի հարավային նահանգներում տեղի են ունենում զորքերի տեղաշարժեր, փոփոխություններ, և պահանջում է բացատրել դրանց իսկական պատճառներն ու նպատակները։ Հեռագրի պատասխան-ծածկագրում Շուլենբուրգը զեկուցում է.

«Պետրոգրադ. գերմանական դեսպանություն։ Հիշյալ հաղորդագրությունն արդեն հայտնի է 14 օր։ Չնայած մեր բոլոր փորձերին ու ձգտումներին, ոչինչ ավելին իմանալ հնարավոր չի եղել։ Հավանաբար, էշելոնները դեռ Բաքվով չեն անցել։ Կարսում և շրջակայքում վերջին ժամանակներս չեն նկատվել նոր զորամասերի փոփոխություններ։ Այս տարի ենթադրվում է սովորականից ավելի անասնակեր գնել։ Շուլենբուրգ»[1]

Հետագայում Շուլենբուրգն իր գործակալներից ե գործակիցներից ավելի խիստ պահանջում էր, որ նրանք գաղտնի դիտողությամբ իմանան ռուսական զորքի տեղաշարժերի մասին և զեկուցեն իրեն։ Շուլենբուրգի գործակալներից մեկը, Թավրիզում ավստրիական հյուպատոս Կրեննեվիլը, հետևյալ հեռագիրն է ուղարկել Թիֆլիս՝ Շուլենբուրգին.

«Իմ խիստ գաղտնի տեղեկությունների համաձայն, առայժմ հյուսիսից դեպի հարավ, դեպի այս կողմ զորքերի շարժում տեղի չի ունեցել. միայն լուրեր կան այն մասին, որ Կովկասում պետք է ձևավորվի չորրորդ բանակային կորպուս»[2]

Պարսկաստանում աշխատող գործակալներից մեկը, Վիլհելմ Լետտ ծածկանունով, մերթ Թավրիզից. մերթ Թեհրանից Շուլենբուրգին սիստեմատիկ կերպով զեկուցել է Պարսկաստանում գերմանական և Թյուրքական ձեռնարկումների կիրառման ու ռուսների վերաբերմունքի մասին։ 1914 թ.

1 Վրաց. ՍՍՌ Հակ. Ռազ. Կենտր Արխիվ. Ֆ. 3, գ. 157, թ. 186.
2 Նույն տեղում, նույն գործ, թ. 187։
Նույն տեղում, թ. 99.

մարտի 22-ին նա գրում է, թե գերմանական առևտրա-արդյունաբերական գործունեությունը ծավալվում է հաջողությամբ, ռուսական տարրը դուրս է մղվում։ Հաջորդ հեռագրում նա հաղորդում է, թե չնայած որ ինքը ռուսական հյուպատոսին անընդհատ ոմբակոծում է վերջնագրերով և վատ հարաբերությունների մեջ է նրա հետ, սակայն գերագանց մտերմական կապեր ունի ռուսական հյուպատոսի կնոջ հետ։[1] Այդ էլ հնարավորություն է տալիս «Վիլհելմ Լեոտին» տեղյակ լինելու ռուսական հյուպատոսի ամեն մի քայլին Պարսկաստանում։ Թեհրանից ուղարկած մի հեռագրում նա զեկուցում է, թե ինչպիսի միջոցներ է ձեռք տոնում ստացված առաջադրանքներն իրականացնելու համար։

Կիևից գերմանական հյուպատոս Գյորինգը Շուլենբուրգին ուղարկած հեռագրով հաղորդում է, թե վերջերս զրույց է ունեցել Կովկասից Կիևի կայազորը եկած մի գնդապետի հետ, որը զրույցի ժամանակ պատմել է Կովկասի թյուրքական ու պարսկական սահմանների պաշտպանության վիճակի և բերդային ամրությունների մասին։ Նա պատմել է սահմանամերձ կետերի կայազորների զորքի վիճակի, քանակի մասին, հատկապես կարևոր տեղեկություններ է հայտնել Ալեքսանդրապոլի և Կարսի պաշտպանության մասին։ Գյորինգը խնդրում է Շուլենբուրգին՝ ստուգել այդ տեղեկությունների ճշտությունը և ինկատի ունենալ։ Շուլենբուրգը մի քանի օր հետո իր կոլեգային գրում է.

«Կիև, 10. 4. ա 4. Տեղեկությունները հիմնականում ճիշտ են։ Այստեղի մեր դիտողություններից երևում է, որ կազմակերպվելու է Կովկասյան 4-րդ բանակային կորպուս, որը կանգնելու է թյուրքական սահմանում։

Արևմուտքում վերահաս պատերազմի սպառնալիքի հետևանքով Կովկասյան ռուսական բանակի գլխավոր մարտական ուժերը փոխադրվում էին Արևմուտք։ Կովկասում երբորդ հերթի մոբիլիզացիայից պետք է կազմակերպվեր նոր կորպուս, որի նշանակությունը սահմանային-պահակային ծառայությունն էր լինելու։ Այդ բոլորը բացարիկ հշգրտությամբ գրի էին առնվում Շուլենբուրգի զեկուցագրերում։

Շուլենբուրգի գաղտնի սենյակում պահվում էին այն ռազմական հետախուզական խիստ գաղտնի զեկուցագրերը և ռազմական-ստրատեգիական քարտեզները, որոնք ցույց էին տալիս ռուսական բանակի դիսլոկացիան, գ'ենվածությունը, քանակական կազմը, մարտունակությունը։ Այդ փաստաթղթերի հիման վրա Շուլենբուրգն ինֆորմացիաներ էր ուղարկում Մեոլին, Պետրոգրադ, կ. Պոլիս։ Այստեղ կհիշատակենք Շուլենբուրգի գաղտնի սենյակում հայտարերված գործերից և քարտեզներից մի քանիսի մասին։

Մի գործի վրա գրված է «Թիֆլիսի գերմանական հյուպատոսության ռազմական արտակարգ գործ», որի մեջ կարված են գործակալներից ստացված ռազմական հետախուզական զեկուցագրերը։ Մեկ ուրիշ գործում, որը կրում է «Ռազմական զեկուցագրեր» վերնագիրը, կարված են Շուլենբուրգի ուղարկած զեկուցագրերի պատճենները։ Շուլենբուրգը գրել և մեքենայով տպված էջերից կազմել էր մի բրոշյուր՝ «Ռուսական զորքերի դիսլո-

[1] Վ. ... ՍՍՌ Հեղ. Ռեալ. կենտր. Արխիվ, ֆ. 3, դ 157, թ 99.
[2] Նույն տեղում, նույն ֆոնդ. և գ., թ. 197։

կացիան» վերնագրով։ Ձեռագիր վիճակում 13 թերթի վրա նշված են Կովկասում ռուսական զորքերի դիսլոկացիայի բոլոր ժանրամասնությունները։ Շուլենբուրգի հետ աշխատող հետախույզ-տոպոգրաֆները գծել էին քարտեզներ և պարզ եղանակներով բազմացրել այդ քարտեզները մինչև առանձնյակ օրինակներ։ Շուլենբուրգի արխիվում գտնվել է մի քարտեզ, որի վրա ցույց է տրված ռուսական բանակների դիսլոկացիան Կովկասում և Ասիական Ռուսաստանում, մեկ ուրիշ քարտեզ, որի վրա նշված է ռուսական զորքերի դասավորությունը Եվրոպական Ռուսաստանում։ Շուլենբուրգի սպաները գծել էին Կովկասյան երկրամասի երկու մեծ քարտեզներ, մեկ դյուժյում քսան վերստ մասշտաբով, և 42 թերթից բաղկացած քարտեզ-ալբոմ, մեկ դյուժյում 5 վերստ մասշտաբով։ Այդ քարտեզի ամեն մի թերթը պատկերում է մի գավառ, քաղաք, կամ ստրատեգիական կարևոր հանգույց։ Այդ բոլոր քարտեզների լուսանցքներում տված է նրանց հրատարակության ժարկան—«Թիֆլիսի գերմանական հյուպատոսություն»։ Մի գործում կարված են գերմանական և ռուսական կովկասյան թերթերից կտրված հոդվածներ, որոնց մեջ նյութեր ու փաստեր կան ռուսական զորքերի տեղաշարժերի, նոր ձևավորումների, նոր նշանակումների, տակտիկական խաղերի, ռազմական դպրոցների շրջանավարտների և այլ խնդիրների մասին։ Մի ուրիշ գործում պահված են այն զեկուցումները, որոնք տաղորդում են Սև ծովի ափերին և նավահանգիստներում կատարվող պաշտպանական աշխատանքների մասին և զեկուցագիր՝ Բաթում—Արդվին խճուղու կառուցման մասին։

Շուլենբուրգի արխիվի գործերը, փաստաթղթերն ու քարտեզները շատ են։ Նրանց ուսումնասիրությունից այնպիսի տպավորություն է ստացվում, որ կարծես դա ոչ թե հյուպատոսության արխիվ է, այլ ռազմական մի խոշոր օպերացիայի պատրաստվող շտաբի արխիվ։ Ասենք՝ Շուլենբուրգի գլխավորած գաղտնի կենտրոնը իրականում հանդիսանում էր Կովկասի գավթումը նախապատրաստող մի իսկական շտաբ։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում և Կովկասում գերմանական իմպերիալիզմի քաղաքականությունն ավելի լավ ճանաչելու տեսակետից բնորոշ են նաև այն դիրեկտիվները, որ ստացել է Շուլենբուրգը։ Արտաքին գործերի մինիստր Օիմմերմանը իր մի դիրեկտիվում գերմանական հյուպատոսությանն առաջարկում է։

«Գերմանացիների հետ բոլոր տեսակի հարաբերությունների ժամանակ ոչ մի խտրություն չդնել այն գերմանացիների նկատմամբ, որոնք ապրում են հայրենիքում, և այն գերմանացիների նկատմամբ, որոնք գաղթել են արտասահման։ Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել այն գերմանացիներին, որոնք արդեն վաղուց ապրում են արտասահմանում, հատկապես Ռուսաստանում»։[1]

Մի այլ դիրեկտիվում կայսերական արտաքին գործերի մինիստրությունը Շուլենբուրգից պահանջում է «ամենրամասն զեկուցագիր ուղարկել Կովկասի դիրմանական գաղութների վիճակի մասին, ցույց տալ գերմանական բնակչության կյանքը, կենցաղը, ունեցվածքային դրությունը, ստացվող եկամուտները, զեկուցել, թե ինչպես են գերմանացիներն ընդու-

[1] Վրաց. ՍՍՌ Հակ. Ռևոլ. կենտր. Արխիվ. Ֆ. 3, գ. 167, թ. 169։

նում Կովկասի կլիման, ակկլիմատիզացիայի ենթարկվում»։[1] Այդ դիրեկտիվից պարզ կերպով երևում է, որ ցիմմերմանը նյութեր էր հավաքում պարզելու համար, թե գերմանացի գաղութարար կուլակներն ու ստրկացնողներն ինչպիսի հեռանկարներ ունեին Կովկասում ապրելու համար։

Գերմանական իմպերիալիստները Կովկասում և Ռուսաստանի մյուս երկրներում վերաբնակեցրած գերմանացիներին դիտում էին որպես «գաղութային քաղաքականության պիոներների, որոնք մեծ ապագա ունեին»։ Գերմանական կայսրությունը և նրա զինված ուժերի գլխավոր շտաբը նախապատրաստվելով իմպերիալիստական պատերազմին, Կովկասում գերմանական գործակալների միջոցով աշխատում էին կազմալուծել այդ երկրամասի պաշտպանությունը և հեշտությամբ զավթել Կովկասը։ Այդ մտադրությունը շարադրված է գերմանական կայսերական մի դիրեկտիվի մեջ, որի մի օրինակը ստացել էր Շուլենբուրգը և ղեկավարվում էր նրանով.

«Մեր զաղութարարների բախտի մասին անհանգստանալու կարիք չկա,—ասված է փաստաթղթում,—Եվրոպայում պատերազմի վերջնական արդյունքները կլուծեն այդ հարցը։ Դրա համար Ռուսաստանում... պետք է առաջ բերել խառնաշփոթություններ։ Դա հակառակորդի ուժերը քայքայելու լավագույն միջոցն է... Քաղաքական գործակալների միջոցով անկարգություններ առաջ բերելը պետք է մանրամասն նախապատրաստվի նաև նյութական միջոցների օգտագործման հանապարհով։ Անկարգությունները պետք է բռնկվեն հանկարծակի, կործանեն հաղորդակցության ուղիները։ Անկարգությունները պետք է ունենան այնպիսի ղեկավարներ, որոնք կրոնական և քաղաքական ազդեցիկ շրջաններից են»։[2]

Այդ դիրեկտիվի ոգուն համապատասխան էլ Շուլենբուրգը Կովկասում նախապատրաստում էր մեծ ու փոքր մասշտաբների դիվերսիաներ և «անկարգություններ», գերմանա-թյուրքական բանակների գործը հեշտացնելու համար։ Այդ կապակցությամբ կարևոր է հիշատակել Շուլենբուրգի գաղտնի այն նամակների մասին, որոնց մեջ արծարծվում են Կովկասում նոր փոխարքա նշանակելու հնարավորությունները։ Գերմանական հետախուզությունը այստեղ ևս համառորեն առաջ էր մղում իր դիծը՝ Կովկասում գերմանական և թյուրքական զավթողական պլանների իրականացումը հեշտացնելու համար։ Ինչպես հայտնի է, ցարական կառավարական բարձր պոստերում նստած Սուխոմլինովը ու Մյասոեդովը գլխավորում էին ավստրո-գերմանական լրտեսների մի խոշոր բանդայի գործունեությունը Ռուսաստանում։ Կովկասի փոխարքա և գլխավոր հրամանատար Վորոնցով-Դաշկովի ծերության և ասպարեզից հեռանալու մոտալուտ հեռանկարը նկատի ունենալով, ներքին կարգով խոսակցություններ ու պայքար տեղի ունեին Կովկասի նոր փոխարքայի և գլխավոր հրամանատարի թեկնածության շուրջը։ 1914 թ. ապրիլի 10-ին Շուլենբուրգը իր մի նամակում գրում է.

«Ըստ երևույթին շատ չենք սպասի մինչև Կովկասում նոր փոխարքա նշանակելու։ Իմ մտերիմ զինվորական գործիչներից ես իմացա, որ ամենից հարմար թեկնածուն հանդիսանում է ռազմական մինիստր

[1] Վրաց. ՍՍՌ Հոկտ. Ռեոլ. կենտր. Արխիվ, ֆ. 3, գ. 167, թ. 184։
[2] Նույն տեղում, գ. 3196, թ. 19։

Սուխոմլինովը, որին ես հարգում եմ, որպես սիրելի մարդու։ Պաշտոնական գործերի ժամանակ նա իմ նկատմամբ չափազանց նախազգուշացնող է։ Ես կարծում եմ, որ այդ ընտրությամբ դուք գոհ կլինեք»։[1]

Ոչ մի տարակուսանք չի կարող լինել այն մասին, որ եթե Սուխոմլինովը գառնար կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, դրանով իսկ Շուլենբուրգի առջև դրված ռազմա-ստրատեգիական առաջադրանքների կատարումը շատ բանով կհեշտանար, բայց իրերը զարգացան այլ ուղղությամբ, և Շուլենբուրգի մտադրություններն այստեղ ես չիրականացան։

Կայսեր Թագաժառանգ Ֆրիդրիխ Վիլհելմը 1914 թ. հունվարին Շուլենբուրգին ուղղած մի հեռագրով պահանջում է մանրամասն քարտեզներ և սխեմաներ ուղարկել իրեն՝ Ճիաթուրայի մարգանեցի հանքերի վերաբերյալ։ Շուլենբուրգի թղթերի մեջ կա մի հեռագիր, որով գերմանական գաղտնի բյուրոն պահանջում է Կովկասից Գերմանիա սովորելու գնացած բոլոր հրեաների ե հայերի ցուցակը։ Գերմանական գլխավոր շտաբի մի հրաման պարտավորեցնում է Թբիլիսիի հյուպատոսությանը, որ պատերազմը սկսվելուն պես անմիջապես գինապարտ գերմանացիները կազմակերպված ուղարկվեն զորամասեր։ Շուլենբուրգի ապարատը կազմել էր Կովկասում ապրող գերմանացիների ցուցակը և նրանց բաշխել զորամասերի վրա։

Շուլենբուրգի արխիվում գտնվել է գերմաներեն կազմված մի չափածո կոչ-թռուցիկ, որը տարածվել էր Կովկասում ապրող գերմանական գաղութներում։ Կբերենք այդ կոչի արձակ թարգմանությունից մի կտոր.

«Մեր եղբայրներին»—ասված է կոչի վերնագրում. «Եղբայրներ, Հայրենիքի ստիվաններից շատ հեռու, մենք զգում. ենք, թե որքան բարձր է կանգնած մեր Գերմանիան և որքան մեծ հարգանք կա դեպի մեր կայսրը։

Եղբայրներ, Հայրենիքից հեռու մենք զգում ենք Գերմանիայի ազդեցությունը, մեծ, հզոր Գերմանիայի, որն ուժեղ է նաև օտար երկրներում։

Եղբայրներ, այս մեծ հանդիսավոր օրը միանանք մեր կայսեր թագավորության 25-ամյակը նոր իրադարձությամբ նշելու համար։

Կյանքի փոթորկոտ ծովում, չնայած ահավոր ալեկոծումներին, նա գերմանական կայսրության նավը առաջ է տանում դեպի միասնական բարձր նպատակը...

Եղբայրներ, միավորվենք կատարելու մեր պարտքը ոչ միայն խոսքով, այլև գործնականում... Գերմանական ողջույն»։[2]

Կարելի է էլի բերել փաստաթղթերի մի ամբողջ շարք, որոնք գտնվում են գաղտնի արխիվների ընդերքում և հայտնի չեն դարձել ժողովրդին։ Սակայն բերված փաստաթղթերն էլ բավական են, որպեսզի ցույց տրվեր գերմանական և թյուրքական գործակալության Թբիլիսիի կենտրոնի ծավալած ագրեսիվ գործունեությունը՝ Կովկասի զավթումն ու գաղութացումը տենդորեն նախապատրաստելու ուղղությամբ։

[1] Վրաց. ՍՍՌ Հակա. Ռևոլ. կենտր. Արխիվ, ֆ. 3, գ. 187, թ. 99։
[2] Նույն տեղում, թ. 190։